

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Քիթիլուսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ»:
կամ Tiflis. Rédaction «Mschak»:

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
իրաւաբան չիւր բառին 2 կոպեկ:

ՄՇԱԿ

ՀԱՄԱՐԱԳԻՐ ԳՐԱԴԱՐԱՆ ԲԱՐՍԻՍՏՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կաշառակերութիւնը մամուլի մէջ — ՆԵՐՔԻՆՆԵՐ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Կոկին Կարսի գաղթականների մասին.
«Հայրենիք» լրագրի կարծիքը. Խօսքայի վերաբերյալ.
Ռուսաց դրամատիկական ներկայացումներ.
ԲՆԱՄԱԿ ԽՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ. Ներքին լուրեր.
— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Բողոքական անդերբրդ.
Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Հնդկագիտութիւն.
— ԲՈՐՈՒՆ. — ԲԱՅԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍՏՈՒՆԻ
ՍԻՐԱԿԱՆ. Նիսիստի մշակութիւնը Կովկասում:

ԿԱՇԱՐԱԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՈՒԼԻ ՄԵՋ

Ձեռքերից ամենաազնիւր և ամենաազգուն գրիչն է: Եւ ոչ մի կոչում այնքան բարձր, այնքան պատուաւոր և այնքան պատասխանատու չէ, որքան գրողին. հրապարակախօսի կոչումը: Երկրի ռուս գրող Շէքսպիր իր ժառանգներին թողած կտակի մէջ այս նշանաւոր խօսքերն է տուած. «Բոլոր տեսակ պարագայութիւններէն գերադասեցէք գրականութիւնը»:

Սակայն այդ ամենաազնիւ և ամենաազգուն գրիչը, գրիչը, և այդ բարձր, պատուաւոր կոչումը ինչպիսին է հրապարակախօսի կամ գրողի կոչումը՝ դառնում է ֆինասար, թունաւոր, ապականող և անբարոյականացնող, երբ գրողը դաւաճանում է գրականութեան ազնիւ, յաւերժական, սուրբ, անկաշառ սկզբունքներին, երբ գրողը իր գրելը գործ է դնում ոչ թէ իր և մի գէնը, որը պէտք է ճանապարհ բաց անի զաղափարների համար և պաշտպան հանգիստնայ արդարութեան, այլ դարձնում է այդ գրելը մի կեղտոտ, դժուած միջոց, իր անձնական շահերի, իր ստոր կըրքերի, իր կեղտոտ դիտումների համար...

ԲԱՆԱՍՏՈՒՆԻ ԿԱՆ

ՆԻՍԻՍՏԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՏՈՒՄ

Մի քանի անգամ արդէն առիթ ենք ունեցել «Մշակի» էջերում խօսել ծխախոտի արդիւնաբերութեան մասին:

Գիւղատնտեսական արդիւնաբերութեան այդ ճիւղը մեր երկրում արդէն այնքան մեծ ծաւալ է ստացել և մեծ դեր է կատարում, որ հարկաւ, ոչ միայն արժէ, այլ և անհրաժեշտ է, որքան կարելի է, լուրջ ուշադրութիւն դարձնել նրա վրայ:

Անդրկովկասը, հարաւային Ռուսաստանի մի քանի մասնաւոր տեղերից յետոյ, առաջինն է, որ աշուղեցիւ է մեծ մասամբ յետ մղել թիւրքիայի բարձր մաքսով ներմուծվող ծխախոտը, շատ տեղերում մեծ արժանաւորութեամբ փոխարինելով նրան և եթէ մի քանի խոշորոտ եղող հանգամանքներ տեղի չունենային, որոնց վրա կանգ կառնենք աւելի ներքեւ, թիւրքիայի նահանգի մասին խօսելիս, անշուշտ ծխախոտի ցանքը մեր կողմերում կը հանդիսանար արդիւնաբերութեան առաջին ճիւղը՝ թէ աւելի շահաւէտութեան և թէ աւելի ընդարձակութեան կողմից:

Վերջին տարիներում, աւելի քան երբևէ, ծխախոտի մշակութեամբ սկսեցին պարագիւ շատ տեղերում, որտեղ երկրի պայմանները դիւրութիւն են տալիս. միւս տեղերում էլ աւելանում են փորձերը. և այդպիսով, քանի գրեւոր, մեծ ծաւալ է ստանում:

Եթէ մի փոքր համեմատութիւն անենք, թէկուզ վերջին երկու եռամսակի մէջ, կը տեսնենք թէ ինչ մեծ քայլերով է առաջ ընթանում այդ գործը մեր երկրում — Սնդրիկովկասում:

Միջինը 1887—1889 թ. եռամսակում միջին թուով ծխախոտի ցանքատեղերը բուծում էին ոչ աւելի 1700 զեռետալին հող, արդիւնաբերելով մօտ

եւ ոչինչ այնքան անբարոյականացնող, այնքան զգուշիչ չէ, որքան այդ տեսակ գրողը. և ոչ մի գէնը այնքան թունաւոր, այնքան ապականիչ չէ, որքան այդ տեսակ վարձկան և ծախու գրիչը...

Եւ եթէ ժամանակակից մամուլը թէ մեր մէջ, և թէ նոյն իսկ օտար, աւելի քաղաքակիրթ, աւելի կուլտուրական երկրների մէջ՝ ներկայումս այնքան ընկած, այնքան անբարոյականացած է, դրա ամենազգուշացնող միակ պատճառն այն է, որ գրականութեան և հրապարակախօսութեան ասպարիզը վրա ոտք են կոխում ոչ թէ անձնուէր աշխատաւորներ, որոնք իրանց հակումներով իրանց բոլոր ոյժերով նուիրված ինչին գործին, այլ ափէրիստներ, որոնք գրելը իրանց համար դարձնում են մի միջոց ապրելու, դիւր ձեռք բերելու և անձնական ամենազգուշիչ նպատակներին հասնելու համար:

Այդ տեսակ անբարոյական և վարձկան գրողներին ու մամուլի աճիւն առաջնող զեկաւարը ոչ թէ դաղափարը գործը, կամ համոզմունքն է, այլ կաշառքը, փողը, որ տիրապետել է և քանի դուռ աւելի է տիրապետում ժամանակակից մամուլին:

Կաշառակերութիւնը, որ ապականել է հասարակական կեանքի համարեա բոլոր խաւերը, մուտք է գործել և այն սուրբ ու պատկառելի ասպարիզը, ինչպիսին է գրականութիւնը և միայն փողի, կաշառքի ոյժով կարելի է բացատրել այն տուրք և ողբալի երեւոյթը, որ այսօր տիրում է ամբողջ մամուլի մէջ: Նայեցէք ձեր շուրջը. — ահա մի հրապարակախօս, որ դեռ երէկ իր բոլոր ոյժով կուռում էր այս կամ այն անձի դէմ, և համարում էր նրան անբն-

դունակ, անպէտք, անարժան. իսկ այսօր նոյն վարձկան հրապարակախօսը սանձարձակ շողորթութիւններ է թափում նրա առաջ, և խօսք չէ դառնում նրա ընդունակութիւնները և արժանաւորութիւնները նկարագրելու համար:

Ահա ձեզ հրապարակախօսներ, որոնք երէկ սողունի նման սողում էին այս կամ այն բարձրագոյր պաշտօնային առաջ, գովում նրա իւրաքանչիւր քայլը, նրա անձը, նրա ամեն մի կարգադրութիւնը: Իսկ այսօր դարձել են նրա կատաղի թշնամիներ, ուրանալով նրա մէջ որ և է ընդունակութիւնը, որ և է արժանիքը, որ և է շնորքը: Ի՜նչու, որովհետեւ այլ ևս սպասելիք չունեն:

Ահա ձեզ մի լրագիր, որ կուրացել է, և չէ տեսնում, թէ ինչպէս այս կամ այն հասարակական հիմնարկութիւնը քայքայվում, իր վերջնական անկմանն է մօտենում: ահա ձեզ մի վարձկան թերթ, որ գիտմամբ թաղանթում վարագործում է այս կամ այն հաստատութեան մէջ տեղի ունեցող զեղծումները, անկանոնութիւնները, — որովհետեւ իրանց շահ ունի ինքը, իր բարեկամը, իր կողմնակիցը, իր հովանաւորը:

Ահա վերջապէս մի մամուլ, որ փողով վաճառում է իր էջերը, որ իր գծուած դրոշմութիւնը պահպանելու համար շողորթութիւն է դրոշմներին, որ կաշառք վերցնելով՝ այսօր փառաբանում է մի վաշխառուի, վաղը մի մուլի ֆինանսիստի, երբորդ օրը մի յանցաւոր բանկիրի, շուրջը օրը մի կեղեքողի, մի հարստահարիչի և այլն և այլն...

Կա ժամանակակից մամուլի անկման վերջին աստիճանն է, երբ համոզմունքի տեղ տիրում է փողը, երբ դաղափարի տեղ թաղանթութիւն է կաշառքը, անկողմնա-

պահութեան փոխարէն՝ անձնական շահը, ետական նպատակը...

Ֆրանսիացի յայտնի գրող Լէրուա-Քալէ, նորեւս «Revue des Deux Mondes» հանդիսի մէջ, խօսելով այն մասին, թէ ինչպէս փողը կաշկանդել, սպանել է հասարակական ամբողջ կողմնակերպութիւնը, և մասնաւորելով իր խօսքը այն մասին, թէ ինչ սոսկալի դեր է կատարում կաշառակերութիւնը մամուլի մէջ, ասում է հետեւեալը. «Կաշառքը ահագին դեր է կատարում մամուլի մէջ... Ֆրանսիայում, Գերմանիայում, Աւստրիայում, Իտալիայում և Ամերիկայում՝ համարեա բոլոր լրագիրները գտնվում են կաշառակերութեան խաղաղաւոր լծի տակ: Լրագիրների մեծ մասը կրում է ոսկեայ վզնոց: Բանկերը և ֆինանսիստները սուրբ-սիրելի են տալիս լրագիրներին, կաշառում կամ կապալով են վերցնում լրագրական սինակները: Պատմայի գրողները պատմութեան մէջ ամենախայտառակ դերը կատարել էր մամուլը: Եւ լրագիրներից մի քանիսը անամոթաբար յայտարարեցին, որ նրանք ոչինչ ամօթալի բան չեն տեսնում իրանց էջերը ծախելու մէջ: Նոր տիպի հրապարակախօսները այն հայեացքն են յայտնում, որ լրագիրը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ագլօկատ, որ պաշտպանում կամ մեղադրում է այս կամ այն մարդուն, և դրա համար փող է ստանում... Կար ժամանակ, երբ հրապարակախօսները կամ գրողները նայում էին իրանց գրելի վրա իբրեւ ասպետական գէնքի վրա, որը ճանապարհ է բաց անում մարդկութեան առաջ դէպի ազնիւ և դէպի երջանկութիւնը: Իսկ այժմ երեւան են եկել վարձկան գրագիրներ, մամուլի աւազակներ, զրէյ սրիկաներ»:

Վերջացնում ենք մեր յօդուածը Լէրուա-

մինչև այժմ չէ մտածել երկրի պայմաններին համապատասխանող մի հանրամատչելի ձեռնարկ տալ ժողովրդի ձեռքը, որ կարող էր մեծ դեր կատարել:

Հայոց գիւղատնտեսական գրականութեան մէջ կատարելապէս բացակայում է որ և է մասնագիտորէն գրուածք, որ հարկաւոր դէպքերում մասամբ առաջնորդ հանդիսանար գիւղացուն այդ ցանքով պարագիւլիս, և մեր գիւղացիները միմիայն ինքնուս փորձառութեամբ են վարում գործը, ուստի շատ անգամ չնչին պատճառներով գործը վերանայում է:

Նոյն իսկ ռուս գրականութեան մէջ միայն երկու հեղինակութիւններ կան այդ մասին. մէկը Շերծաչեւ ինք, որ առաւելապէս նուիրված է ամերիկական եղանակով բարդ տեխնիկական մեքենաներով չորացնելուն, որ համարեա բոլորովին անմատչելի են մեր գիւղական սուղ միջոցներին և սահմանափակ հասկացողութեան, միւսը Սոստակե՛ի 1889 թ. հրատարակութիւնը, որ աւելի գործական դասեր է տալիս և գոցէ շատ օգտակար հանդիսանար, եթէ մատչելի և ըմբռնելի դառնար մեր գիւղացիներին:

Անկասկած, եթէ մեր ծխախոտացանները կարողանային լուրջ կերպով ուսումնասիրել ծխախոտի մշակելը, իւրացնելով գիտութեան ցուցմունքները՝ հողի յատկութեան, ծխախոտի բնագործիւն, և նրան արդիւնաբերելու յատկանիշները մասին, այն ժամանակ, շուրջիւ մեր երկրի հողի, կլիմայի, յարմար և արդիւնաբեր տեսակի, մեր ծխախոտը առանց բարձր մաքսի հովանաւորութեան անգամ մեծ աջգործեամբ կարող էր փոխարինել իսկական տաճկական ծխախոտին և վաճառվել կերկնակի թանկ գնով՝ բանալով իր համար շատ հեռաւոր երկրներում շահաւէտ վաճառանոցներ:

Առ այժմ, վաճառման տեսակետից աւելի բաւարար վիճակի մէջ է գտնվում Գոթայիսի նահանգի, առաւելապէս Սուխումի շրջանի ար-

դիւնաբերութիւնը, որովհետեւ, գտնվելով Տաճկաստանից արեւելք գաղթած աւելի փորձառու վարպետների ձեռքում, աւելի լաւ տեսալի է արտադրում և մօտ լինելով Ռուսաստանին, ունենալով հարողակցութեան աւելի հեշտ միջոցներ, կարողանում է աւելի վաճառվել, թէև այն տեղերում ևս անպակաս են սպէկուլատորներ, որոնք օգտվելով ցանցովի հեղ լիճակից, խլում են նրանից օգուտ մեծ բաժինը:

Այդտեղ, Սուխումի շրջանում, ծխախոտի արդիւնաբերութեամբ համարեա բացառապէս պարագիւում են Տաճկաստանից գաղթած հայ և յոյն երկրագործներ, որոնք թիւրքիայում տերապետող ծխախոտային բէժիմիս ձեռնմաների շնորհիւ, թուրքից հայրենի հողը և մեծ թուով տեղափոխվեցին այդտեղ: Նրանցից շատերը գիւղական համայնքներ կազմելով՝ աջողեցին իրանց փողերով սեպական բերրի հողեր գնել և դառնալ հողատէրեր: Սկզբում կառավարութիւնը այդտեղ գաղթողներին ձրի հողեր էր տալիս, սակայն որովհետեւ, շատ անգամ, ձրի տուած տեղի հողերը այնքան բարեբեր չը լինելով՝ բաւարար կերպով աշխատանքը չէին վարձատրում, ուստի գաղթականները հէնց փողը ինչ միջոց ձեռք բերելով աշխատում էին թողնել այդ տեղերը և վերադառնալ Սուխումի արեւելից հողեր: Այժմ, որքան մեղ յայտնի է, այլ ևս նոր գաղթողներն ոչ մի տեղ էլ ձրի հող չէ տրվում:

Բաթումի շրջանում, այն է Արդուինի և Արդա-նուչի գաւառամասերում, պարագիւում են տեղական մասնագիւական վրացի գիւղացիներ. Արդանու-չում նաև հայեր: Այդ տեղերում թէև արտադրվում է ընտիր տեսակի, սակայն շատ մեծ ծաւալ առնել չէ կարողանում հողի սակաւութեան պատճառով: Միայն վերջերում, քանի որ մասնատու-կան գիւղացիները գաղտազուղի գաղթում են Տաճկաստան, ազատ մնացած հողերից օգտվում են հարկանները և իրանց ծխախոտի արտերը ընդարձակում:

Բայիէի այդ խօսքերով, որոնք միանգամայն ճիշդ նկարագրին են և մեր մամուլի անկման:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԻՆ ԿԱՐՍԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գաղթական հոսանքը շարունակվում է թիւրքաց Հայաստանից՝ աւելի և աւելի ընդարձակ չափեր առնելով: Ինչ եւք անուամբ Մի աւելորդ ամիս ևս նրանց կերակրելով և ձեռքնաբեր ծալած նայելով՝ ոչինչ չի գուրս գայ: Այդ մերի և քաղցած ժողովրդին վաղը, միւս օր պէտք է վերադարձնեն իրանց երկիրը. կամաւ նրանք չեն գնայ. ուժով ուղարկվելիս՝ շատերը կը փշանան: Հարկաւոր է այժմանից որոշել և հոգ տանել, որ թիւրքաց-Հայաստանի մի քանի քաղաքներում անպատճառ մասնաժողովներ կազմվեն: Հարկաւոր են նախապատրաստել մարդիկ, որոնք համոզեն այդ մարդկանց վերադառնալ, նոյն իսկ հետերը գնալ:

Կենդանի գործ է հարկաւոր վաղը ինչ քաղաքներով են և յոյս ներշնչելու այդ մարդած մարդկանց, որոնք այս րօպէիս նմանվում են հովիտ փակելու և անդունդ դարձող ոչնչութեան հոսանքին: Հարկաւոր է հոգ տանել, որ նրանք վերադառնան. մեր երկրում ոչ մի լաւ ազգայն չէ ստատում նրանց. հող նրանց չեն տալ, գործ չեն տալ. օգնել տարիներով հաղորատու գաղթականներին՝ հնար չը կայ. ամառ է, ապրում են այժմ մի կերպ, վաղը ձմեռը կը սկսվի և նրանք ճանձերի պէս կը կտորվեն:

Ինչ է անում մեր գաւառական ինտելիգենցիան, օգնութեան գործը գնում է շատ դանդաղ. աւելի քիչ է փող հաւաքում, քան նախկին սովի ժամանակ: Մինչդեռ կարելի այժմ աւելի մեծ է: Հարկաւոր է լուրջ ուսումնասիրութիւն ներկայ գաղթականութեան պայմաններին: Գաղթականների ցար հասկանալու, նրանց օգնելու համար, հարկաւոր է գործել նրանց մէջ:

Յուսահատվել հարկաւոր չէ, հարկաւոր է և անդուլ և ջերմ սրտով սկսել գործը և հաւատարմութեամբ, որ կարելի է որ և է գործ կատարել: Այդ գանդաղ և ծուլ հոգադրութիւնը անօգուտ և կատարեալ անտեղի է: Մենք այսօրվայ

մեր կատարելիք գործը թողնում ենք և երբ խելքի կը գանք՝ արդէն ուշ կը լինի:

Ա. Ա.

«ՀԱՅՐԵՆԻՔ» ԼՐԱԳՐԻ ԿԱՐԾԻՔԸ

Կ. Պոստի «Հայրենիք» լրագիրը՝ նոյնպէս զբաղվելով քահանայապետ հարցով, սկսել է անկողմնապահութեամբ և արժօրէն ուսումնասիրել այդ հարցը, քննելով նրան դանազան կողմերից: Մենք ուրախութեամբ նկատեցինք, որ լրագիրը չէ վերցրել իր վրա փաստաբանի կամ պրօկուրօրի դեր, ինչպէս անում են վարձկան թերթերը, այլ սկսել է ուսումնասիրել հարցը լրջօրէն: «Մշակ» էջերը թող չեն տալիս շատ քաղաքական անել «Հայրենիք» յօդուածներին, մենք միայն բաւականապէս ենք առաջ բերելով հետեւեալ մի կտորը.

«Կովկասեան մամուլին մէջ օրուան խնդիրն է «Արարատ» Արշէն երէցի յօդուածը: Յետադիմական թերթերը կը ջանան վեր վերցնել քոչը ուրուն ներքե ծածկուած կը մնայ Տ. Արշէնի անձնականութիւնը: Միւսները կը յայտարարեն թէ քաղաքական վիճարանութիւնը երկու կողմէն հաւատարմաբար պայմաններու մէջ պահելու համար պէտք է որ ոչ ոք հետաքրքիր ըլլայ հրապարակ հանելու: Արշէնի իսկականութիւնը: Ընդհանուր սկզբունքներու խնդիրներն իսկ համարձակօրէն լուսարարել կարենալու համար պէտք է որ հետաքրքրութիւնն ալ սահման մը ունենայ:

«Տ. Արիստակէս կայսերական իշխանութեան կարեւոր յօդուած մը որ թէ բարեկամներու և թէ հակառակորդներու շրջանակներուն մէջ իրարարանցում պատճառեց: Սրբազանին յօդուածին ոգին այն է թէ միշտ պատասխանատուն հոգեւոր բարձրագոյն իշխանութիւնն է երբ ժողովուրդը անարժան քահանաներ կուենայ: Իր այս համոզումով Տ. Արիստակէս կայսերական կուզէ հերքել Արշէն երէցի այն վարանտ կասկածը, թէ քանի որ ժողովուրդը տգէտ, օղորմելի անձնք քահանայացու կը ներկայայնէ, ինչ ընէ հոգեւոր իշխանութիւնը, կը հարկադրուի գոհացում տալ: Արշէն երէց շատ պերճաբանութեամբ գրեց իրեն բուն բերելին մէջ զբաւ էր այն փաստերը որոնցմով անոնք հոգեւոր իշխանութիւնն կը պահանջէ իրենց ներկայացուցած անձներու քահանայ ձեռնադրութիւնը: Ինչ ընէ այս պարագային մէջ հոգեւոր

և որ իշխանութիւնը. անհրկած կը մնայ: Տ. Արիստակէս կայսերական ընդհանրապէս կը հաստատէ թէ հոգեւոր իշխանութիւնն է որ կը նստի քաղաքի իր թիւրաւութեամբ անարժաններուն քահանայ ձեռնադրութիւնը: «Սրբազանը ընդարձակ յօդուածով մը և պատմական տեղեկութիւններով կը հաստատէ իր այս ըսածները:

Ապա առաջ բերելով Արիստակէս կայսերական յօդուածի կէտերը, լրագիրը աւելացնում է. «Արիստակէս կայսերականի ամբողջ յօդուածին հոգին այն է թէ միայն և միմիայն հոգեւոր իշխանութիւնն է պատասխանատու անարժան քահանաներու ձեռնադրութեան գործին մէջ:

«Սրբազանը որ մեծ փորձառութեամբ կը խօսի, ցոյց կուտայ թէ շատ անգամ տիրացուի մը ձեռնադրութեանը համար ներկայացուած հանրագրեւոր լոյլ քահանայացուին մօտիկ շրջանակներուն գործն են:

«Արիստակէս սրբազան վրաստանի և խմբէթի առաջնորդութեանը ժամանակ ամենամեծ հոգածու մը եղաւ. քահանաներու բարեկարգութեան խնդիրն համար Արարատ անձնք քահանայ չը ձեռնադրելուն պատճառաւ անհամաձայնութիւն ունեցաւ Մարկար կաթողիկոսի հետ և հրաժարեցաւ Ուշափ ատեն որ Սինոդի մէջ շատ ազդեցիկ եղաւ, միշտ ուշադիր գտնուեցաւ որ անարժանները քահանայ չը ձեռնադրուին: Մեր եկեղեցիին համար դժբաղդութիւն մըն է որ այդ փորձառու, անկեղծապէս եկեղեցին սիրող ասակալ կայսերական այսօր հզոր ձայն մը չի կրնար լսել ընկ տալ:

Միանգամայն համակրելով լրագրի բուն անկողմնապահ դիրքին և ցանկութեամբ նպատակու այս հարցի պարզութեան, մենք խորհուրդ ենք տալիս «Հայրենիք» խմբագրութեան՝ ճիշդ փաստերով ծանօթացնել մեզ: 1) Ինչ գրութեան մէջ է քահանայական հարցը թիւրքաց հայերի մէջ. 2) պատմական մեզ այդ դասակարգի ընդհանուր վիճակը. 3) ցոյց տալ, թէ ինչ դեր է կատարում ձեռնադրութեան մէջ կաշառակերութիւնը. 4) ինչ տոկոս են կազմում ուսում առած քահանաները թիւրքայայտ և 5) ինչ արժանաւորութիւն են ցոյց տալիս թիւրքաց հայերը զէպի տգէտ քահանաների ձեռնադրութիւնը:

Այդ հարցերի պարզելը շատ հետաքրքիր է:

մի հանդամանք, որ շատ է վնասում արդիւնաբերութեան զարգացմանը:

Անդրկովկասի մեր գործարանատէրերը այդ բոլոր տեսակով և դրա վնասակար հետևանքները լաւ հասկանալով հանդիմ, մի րօպէ անգամ կանգ չեն առնում իրանց սնունդ տուող խեղճ գիւղական ծխախոտատէրերի դառն վիճակը մի որ և է կերպ թնկեցանք: հարցի վրայ:

Գործարանատէրերը շատ լաւ են հասկանում, որ պատասխանող կեղծելով այս կամ այն անհատից, ուղղակի կերպով վնասակար ազդեցութիւն է ունենում և գործարանատիրոջ շահերի վրայ նախ, որ նա՝ պատասխանող, սրտ չէ ունենում ուշի ուշով հետեւ իր ցանքսին և արդիւնաբերել ամենաաղքէտ անասինքը, որ եթէ ոչ սովորական, գլխի շատ քիչ բարձր գնով ծախել գործարանատիրոջ և վերջինս ստիպված չը լինի բարձր տեսակներով համար թերթաւոր ծխախոտ բերել տալ կամ թիւրքայայից և կամ հարաւային Ռուսաստանից, վճարելով պողի մի քանի տասնեակ ռուբլիներ աւելի և երկրորդ՝ շատ անգամ պատասխանող չը վարձատրվելով իր ցանքից, ըստիպված է լինում թողնել այդ և զբաղվել հողաւորի ուրիշ արդիւնաբերութեամբ. և այդպիսով հոգեւորականութիւնը, գործարանատէրը կրկին ստիպված է լինում իր պաշարը առնել, լաւ թէ վատ տեսակները, աւելի թանկ գնով, բերել տալով մի մասը հեռաւոր երկրներէ:

Ինչ մեծ գոհողութիւն կը լինէր մեր գործարանատէրերի կողմից, եթէ նրանցից իւրաքանչիւրը, իր միջոցների համեմատ, մի գումար վայր դէր և բոլորից միասին կազմել մի ֆօնդ—հէնց յայտնի շրջանի ծխախոտավաւերին օգնելու ֆօնդ անունով— և այդ փողը, եթէ ոչ առանց տոկոսի (այդ աստիճանի գոհաբերութիւն չենք պահանջում), գլխի օրինաւոր տոկոսով տար փողի կարգ ունեցող պատասխանողներին, որպէս զի նրանք չընկնէին զանազան վաճառականների ձեռք:

ԹՈՒՆԻՍԻՆ ՎՏԱՆԳԸ

Թիւրքաց-Հայաստանում խօսքերան կոտորած է անում: Վարչապետի նախնորդ խօսքերի կողմից արդէն անապահով է յայտարարված: Պաշտոնական տեղեկութիւններից երևում է, որ հարաւային Ռուսաստանում նոյնպէս տարածվում է այդ հիւսնադրութիւնը: Ուրեմն այդ անդ և երբեք չը ցանկալի հիւրը կարող է ժամանել և միշտ մօտ յայտնվել, այդ դժուար է որոշել, սակայն որ նա կարող է անպատճառ յայտնվել, այդ շատ հաւանական է:

Մի կողմից թիւրքաց-Հայաստանից դեռ շարունակվում է զաղթականութիւնը, իսկ միւս կողմից կովկասի հանգային ջրերի սկզբնը արդէն սկսվել է: Այստեղ իւրաքանչիւր տարի Ռուսաստանի զանազան կողմերից, նոյնպէս և վարչապետի նախնորդ անպահով բազմութիւն է հաւաքվում: Ուրեմն խօսքերի կողմից անապահով հրատարակված այդ երկու երկրների հետ ամենախիստ հաղորդակցութեան և անմիջապէս յարաբերութեան մէջ է գտնվում կովկասը, հետեւապէս վաղը, թէ միւս օրը այդ փոփոխութիւնը կարող է յայտնվել և մեր երկրում:

Մասնաւորելով մեր խօսքը Բազուի վրա, որտեղ երկու տարի առաջ խօսքերան սկիզբն առաւ, մենք պէտք է անենք, որ այդ քաղաքը իր բոլոր արմատներով հանդերձ, տարախօսիկ հիւսնադրութիւնները զարգացնելու և տարածելու բաւական նպատակաւոր հանգամանքների մէջ է գտնվում: Բնակիչների մեծ մասը զարգացման դեռ այն ստոր աստիճանի վրա է կանգնած, որ չը նայելով նախնորդաց երկու տարիների աղետին, դեռ տարախօսիկ և էպիկրիսական բնույթով խօսքերը հիւսնադրութիւնների մասին շարունակում է մնալ այն կարծիքի, թէ երկրային պատիժ են, ուստի նրանց առաջն առնելու ոչ մի միջոցի չէ գիտում, կարծելով թէ դրանով Տիրոջ կամքին հակառակած կը լինի:

Բազուի աները, յաճախ զեղեցիկ իրանց արտաքինութիւնը ներկայացնում են կեղտոտութեան մի ամենազգուշիկ բռն: Բնակարանները շատ խճճված են: Տուն կայ, ուր 20—30 ընտանիք է ապրում, և բոլորն էլ մաքրութեան վրա տարբեր հակազդողութեան տեղ մարդիկ: Յաճախ անհարկ կընկնի մաքրատէր գերմանացու ընտանիքը, որ ապրում է կեղտոտ թիւրքի կամ պարսկին քը և անխնայի պայմաններին մէջ, այլ հանդիստ արտով հետեւին որքան կարելի է լաւ պատրաստել, վտանգ լինելով, որ իրանց աշխատանքը իրար չի կորչի: Եւ բացի այդ՝ այդ ֆօնդի անունով բանային թիւրքաւոր մի կենտրոնական պահեստ, որտեղ պատասխանող ամենայն վտանգութեամբ կարողանար պահ տալ իր արդիւնաբերած ծխախոտը, կամ ծախել և կամ աւանտով հարկաւոր գումարը վերցնէ՝ նոր ցանք: մի կարելիքը հոգալու համար, առանց ընկնելու սուեկի պէս բնորդ կոմիսիօներ—պահեստատէրերի ճնշումների և զեղծումների ազդեցութեան տակ:

Չէ որ այդ ծխախոտները, շատ քիչ բացառութեամբ, մտնում են մեր գործարանները, և ինչու որ իննն անշուշտ գործարանի—սպառողի, և ցահնողի—մատակարարողի մէջ պէտք է մտնել կողմնակի կօմիսիօն և մարդիկ—պահեստներ, որոնց միակ շահը մէկի և միւսի կեղծեցում մէջ է կայանում:

Ինչու մեր գործարանները, թէ իրանք են իրար հարկ տալիս պահեստներին և թէ ստիպում, որ խեղճ գիւղացին, որի համար թանկ արժէ իւրաքանչիւր կօպիկը, իր աշխատանքը ամենամեծ մասը, իրեն մի բնական հարկ, տալ որ և է պահեստատէրի, միայն նրա համար, որ վերջինը ամենական մի քանի ռուբլի վարձով մի ներքնայարկ ունի բնած և 110 ռուբլանց մի պատենտ կախած, ու գրանով արտանութիւն է ստանում ընդունել ծխախոտները և ամեն տեսակ ֆօկոսներով վաճառել, կամ խեղդելով լալը խեղճ գիւղացու արդիւնքը:

Վերջապէս ժամանակ է և հարկաւոր է, եթէ ոչ մարդասէր, երկրի արդիւնաբերութեան զարգացման նպատակներով, գլխի իր անձնական շահը հակազդող լինել: և այդպիսով իր աշխատանքը և ուրիշների քրտնքի արդիւնքը բոլորովին անտեղի միջոցների վայելման աղբիւր չը չինել:

Յովհ. Ստեփանեան

Զուգորդից գաւառում ցանում են տեղական վրացի գիւղացիները իրանց անդի՝ եղիպատացուների արտերից յարմար տեղերում, բաժին հանելով՝ դրա համար: Միայն պէտք է ասած, որ այստեղ ևս գիւղացին այնքան չէ օգտվում, որովհետեւ, զիստորապէս ճանապարհների վատութեան պատճառով, գործարանատէրերը չեն այցելում այդ տեղերը, այլ բերքը ամբողջովին ընկնում է տեղական չարչիւնների և երբեմն պատահական հրէայ սակավաթիւների ձեռքը, եթէ ոչ ցանողին համար անձեռնտու, գնիւն և ոչ շատ շահաբեր գընում:—Հրէաները տանում են Ռուսաստան, իսկ չարչիւնները բերում են թիւրքիս:

Թիւրքիսի նահանգում Ախալցխան, հայ և մահմէական գիւղացիների ձեռքով, արտադրում է ոչ նշանաւոր քահանութեամբ և ոչ այնքան յարգ վայելող տեսակի ծխախոտ, թէ և տաճկական ծխախոտի սերմից:

Ախալցխ Սինսի գաւառը, իր լագողազ գիւղաքաղաքի շրջանով, արտադրում է բաւական ընտիր տեսակ և մեծ քանակութեամբ: Միայն այդտեղ ևս՝ ցանող գիւղացիները շատ չեն օգտվում: օգտվում են միմիայն տեղական փողաւոր վաճառականները և թիւրքիսի կոմիսիօներ-սկիւզիկները (պահեստատէրերը): Առաջինները վարձում են գիւղացուն իր հողով, տալով դեռեւտին հողին, մշակութեան և այլ հազարաւոր ծախսերի համար՝ 250 ր., և շատ հաղիւ դէպքերում մինչև 300 ր.: Այդ փողով ամեն միջոցից գուրկ գիւղացին պայմանաւորվում և մշակում է իր կամ վարձովի հողը, ամբողջ ամիսներ տքնում է՝ արել տակ բանելով իրեն վարձկան, իր տան անդամների ամբողջ ոյժով, վարում-տնելով է, քաղում, չորացնում, դարսում, հակ կապում տալիս փողատէր վաճառականին. վերջինիս իրաւունքով միայն ծախվում է, և առած՝ 250—300 ր. դուրս գալով՝ մնացածը գիւղացու հետ կիսում: Գնալ լաւ է, որ իր տեղում ծախվում է և ընկեր-վաճառականը բարեխիղճ է դնում, ծախա-

ծի ճիշդ հաշիւ է ներկայացնում, աշխատանքից օրինաւոր բաժին հանելով ցանողին, որը կարողանում է պայմանաւորված գումարից աւել ծախսածի համար արած պարտքը տալ և մի փոքր գումար էլ ստանալ իրեն վարձատրութիւն իր դառնալին աշխատանքի և հողալ ընտանիքի անհրաժեշտ պէտքերը: Բայց պատահում է և յաճախ, որ բերքը իր տեղում չէ ծախվում և վաճառակներ վերցնելով բերում է թիւրքիս կամ միմիայն պահեստատէրերից մէկի մօտ, որտեղ քանի մի տեսակ ուղղակի թէ անուղղակի հարկերի ենթարկվելուց յետոյ, վաճառվում է, և ինչպէս ասում են՝ «մաղի տակը» ոչինչ չէ մնում և դեռ երբեմն պարտք է մնում ցանողի վրա:

Շատ վարպետ-ցանողներ փորձեր են անում, առանց ընկերական պայմանների, միայն տոկոսով փող վերցնել և ցանել իրանց հաշիւ: Այդ դէպքում ևս բաղը այնքան չէ ժպտում գիւղացուն, փողը վերցրած է լինում յայտնի ժամանակը, և կայն միշտ այդ ժամանակը, թէ և ծխախոտը պատրաստ է, բայց չէ ծախվում: մինչդեռ մեծ տոկոսները բարդվում են խեղճ շրջանի և նա ստիպված է լինում փողի փոխարէն ծախ գնով զիջանել պարտատիրոջ և կամ բերելով թիւրքիս, ընկերի կոմիսիօներ-պահեստատէրի ցանքը, նորից ստիպում փող վերցնելով, որ վճարէ հին պարտքը:

Այնուհետեւ ծխախոտը համարեա դառնում է նոր տիրապետողի սեփականութիւն: Նա շատ անգամ ծախում է ըստ իր քանակութեան և ցանկացած հաշիւը դնում տիրոջ առաջ, կանխօրէն դուրս հանելով տոկոսը, այլ և, ինչպէս վերև յիշեցինք, զանազան ուղղակի կամ անուղղակի հարկեր, և վերջը խեղճ աշխատաւորին կամ ոչինչ չէ մնում և կամ մնում է շատ անշնան բան:

Շատ պարզ է, որ իշխած ծանր պայմանները, ջլատելով իսկական ծխախոտատէրերին, իրում են նրանց վերջին աշխույժ ու եռանդը՝ աշխատելու լաւացնել ծխախոտի տեսակը և յատկութիւնը:

